ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԻ՝ ՀԱՊ-Ի ՀԱՎԱՔԱԾՈՒՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

ՔՆԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու,
ՀԳՊԱ դոցենտ

Համառոտ

Հայ ռեալիստական գեղանկարչության վարպետներից մեկի՝ Փանոս Թերլեմեզյանի (1865,Վան-1945, Երևան) ստեղծագործությունների (գեղանկարչական ու գրաֆիկական ավարտուն աշխատանքներ, էտյուդներ, էսքիզներ, ճեպանկարներ) գերակշիռ մասը, նկարչի կտակի համաձայն՝ հանգրվանել է Հայաստանի ազգային պատկերասրահում: Այդ հարուստ հավաքածուն և արխիվային տարաբնույթ նյութերը հնարավորություն են ընձեռում հանգամանալից ուսումնասիրել նկարչի արվեստը, ամբողջացնել նրա կյանքի ու գործունեության տարեգրությունը և ճշգրտել ստեղծագործությունների թանգարանային տվյալները: Դրանք տեղ են գտել Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյակի առթիվ ազգային պատկերասրահում կազմակերպված ցուցահանդեսն ուղեցող ալբոմում և դրվել են գիտական շրջանառության մեջ:

Հոդվածում արծածվող խնդիրները և գիտահետազոտական աշխատանք կատարելու այս փորձը կարող են օգտակար լինել արվեստաբանական բաժնում սովորող ուսանողների և երիտասարդ արվեստաբանների համար:

Բանալի բառեր. *Փանոս Թերլեմեզյան, ազգային պատկերասրահ, հավաքածու, թանգարանային տվյալներ, ճշգրտում, բնանկար, էտյուդ, ցուցահանդես:*

Փանոս Թերլեմեզյանը (1865, Վան - 1945, Երևան) մեկն է հայ ռեալիստական գեղանկարչության վարպետներից, որի փոթորկալից կյանքի ընթացքը յուրովի արտացոլում է 19-րդ դարի կեսից մինչև 20-ի սկիզբն ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցած օրհասական դեպքերի, մեր ժողովրդի մաքառումի ու գոյատևման, նոր հայրենիք կառուցելու պատմական իրադարձությունները: Թերլեմեզյանը եղել

է իր ժամանակի ակտիվ հասարակական-քաղաքական գործիչներից (1915 թ. Վանի ինքնապաշտպանության ղեկավարներից), քաղաքական հայացքների համար ձերբակալվել է թուրքական կառավարության կողմից, բանտարկվել ու աքսորվել, կարողացել է փախչել Պարսկաստան, այնտեղից մեկնել Փարիզ:

Պրոֆեսիոնալ կրթություն ստանալու և նկարիչ դառնալու երազանքը բավականին ուշ է իրականացել, երկու տարի (1895-1897 թթ.) Պետերբուրգի Գեղարվեստը խրախուսող ընկերության դպրոցում սովորելուց հետո նա ուսումը շարունակել է Փարիզի Ռոդոլֆ Ժյուլիանի գեղարվեստի ակադեմիայում, որն ավարտել է 1904 թվականին՝ երեսունմեկը տարեկանում: Այնուհետև Թերլեմեզյանը ապրել ու ստեղծագործել է Թիֆլիսում, Կոստանդնուպոլսում, Փարիզում, Իտալիայի ու ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում, կազմակերպել է անհատական ցուցահանդեսներ և ամենուր արժանացել բարձր գնահատանքի: 1928 թվականին Հայաստանի կառավարության հրավերով վերադարձել է հայրենիք և մշտական բնակություն հաստատել Երևանում:

Թերլեմեզյանը հիմնականում աշխատել է բնանկարի ժանրում, ստեղծել է նաև դիմանկարներ, թեմատիկ պատկերներ, նատյուրմորտներ: Սյուժետային հարուստ ու բազմազան բովանդակությամբ են առանձնանում Հայաստանի տարբեր վայրերի (Երևան, Էջմիածին, Լոռի, Սևան, Զանգեզուր և այլն), ծննդավայր Վանի, հին Թիֆլիսի, Բաթումի, Պոլսի, Փարիզի, Կահիրեի, Սան Ֆրանցիսկոյի, Ֆրեզնոյի քաղաքային տեսարանների ու շրջակայքի, Բոսֆորի, Նեղոսի, Բրետանի, Խաղաղ օվկիանոսի ափերի ու Նիագարա ջրվեժի պատկերները, որոնք ուշագրավ են միջավայրի կենդանի զգացողությամբ, բնության տրամադրության նուրբ ընկալումով, կատարման վարպետությամբ ու ճաշակով: Նկարիչը մշտապես հավատարիմ է իր որդեգրած սկզբունքին, որ «Արուեստի նպատակը կեանքի զանազան յոյզերը ու մօմենթները բիւրեղացած ձեւով արտահայտելու մէջ կը կայանայ»[1]:

Թերլեմեզյանի ստեղծագործությունների գերակշիռ մասը հանգրվանել է Հայաստանի ազգային պատկերասրահում: Դեռևս Ամերիկայում բնակվելու տարիներին արվեստագետը կատարել է իր ընտրությունը. ամբողջ ունեցվածքը՝ անձնական իրերն ու նյութական

1 Թէրլէմեզեան Փ., «Արուեստի մասին: Մտքեր եւ տեղեկութիւններ», Հայաստանի կոչնակ, Նյիւ Յեորկ, 1923, ԻԳ տարի, թիվ 20, էջ 619-620:

հարստությունը, այդ թվում՝ դրամ, թանկարժեք առարկաներ, գրքեր, արխիվային նյութեր և ամենաարժեքավորը՝ ստեղծագործական ողջ ժառանգությունը նվիրաբերել է Հայրենիքին՝ Հայաստանի կերպարվեստի թանգարանին: Թերլեմեզյանն իր կտակը գրել է մահից 17 տարի առաջ՝ 1924 թվականին, Նյու Յորքում, որի մասին Եղիշե Թադևոսյանի հուղարկավորության ժամանակ հայտնել է Արա Սարգսյանին[1]:

Արվեստագետը մահացել է 1941-ի ապրիլի 30-ին՝ ծննդյան 75 և ստեղծագործական գործունեության 40-ամյակին նվիրված հոբել-յանական միջոցառումներից և Հայաստանի նկարչի տանը կազմակերպված հետահայաց ցուցահանդեսից մեկ ամիս անց[2]: Եվ ինչպես գրում է Արա Սարգսյանը՝ «Կտակը» վերնագրով հոդվածում, հոբելյանական հանձնաժողովի անդամները կազմակերպում են Թերլեմեզյանի հուղարկավորությունը և կատարում իրենց ընկերոջ վերջին ցանկությունը: Նկարչի բնակարան-արվեստանոցում նրա կտակի փակ ծրարը հայտնաբերելու մասին Արա Սարգսյանը գրում է հետևյալը. «Կտակի ընթերցումից հետո տիրեց երկար ու խորհրդավոր մի լռություն: Յուրաքանչյուրիս երևակայության առաջ ամբողջ հասակով կանգնած էր հայրենասեր արվեստագետի պայծառ կերպարը... Թերլեմեզյանը բարձր հայրենասիրության կենդանի մարմնացում էր»[3]:

Հայաստանի կերպարվեստի թանգարան հանձնելու համար ցուցակագրվել է այն ամենը, ինչ գտնվել է Թերլեմեզյանի բնակարանում: Այդ աշխատանքներին ավելացել են նաև վերոհիշյալ անհատական ցուցահանդեսին մասնակցած բոլոր նկարները[4]: Այսպես է ձևավորվել Թերլեմեզյանի հարուստ հավաքածուն, որն ընդգրկում է նկարչի գեղանկարչական ու գրաֆիկական ավարտուն

1 Սարգսյան Ա., «Կտակը», Սովետական արվեստ, 1965, թիվ 11, հետագայում տպագրվել է Ա. Սարգսյանի «Հոդվածներ, ելույթներ, հուշեր» գրքում, Երևան, 1982, էջ 196- 209:

2 Նկարչի հոբելյանը կազմակերպող կառավարական հանձնաժողովի մեջ ընդգրկվել են՝ Արա Սարգսյանը (նախագահ), Մարտիրոս Սարյանը, Սեդրակ Առաքելյանը Հակոբ Կոջոյանը, Գաբրիել Գյուրջյանը, Ռուբեն Դրամբյանը, Մեր Աբեղյանը, Ալեքսանդր Գերասիմովը, տես Կիրակոսյան Մ., Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 2014, էջ 53:

3 Սարգսյան Ա., նույն տեղում, էջ 208:

4 Ժողովրդական նկարիչ, շքանշանակիր Փանոս Թերլեմեզյանի հոբելյանական ցուցահանդեսի կատալոգ / առաջաբանի հեղինակ և կազմող՝ Գ. Լևոնյան, Երևան, 1941, հայ., ռուս., 83 էջ (այսուհետ՝ Ցուցահանդեսի կատալոգ, 1941):

ստեղծագործությունները, բազմաթիվ էտյուդները, էսքիզներն ու ճեպանկարները: Դրանց ավելացել են նաև Վանի ու Վասպուրականի շրջանի 18-19-րդ դարերի դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշները (ասեղնագործ գոգնոց, բոխչա, անձեռոցիկներ, գործվածքներ, սափոր՝ 19 թանգարանային առարկաներ), որոնցից Թերլեմեզյանը չի բաժանվել ողջ կյանքի ընթացքում, ինչպես նաև մեծ հետաքրքրություն ներկայացնող տարաբնույթ արխիվային նյութերը: Ազգային պատկերասրահի հավաքածուում գտնվող Թերլեմեզյանի ստեղծագործությունների թիվն անցնում է հազար ութսունը (նկատի ունենք պահպանման միավորը, հաշվառմանն ավելի մեծ է), որոնք մուտքագրվել են գեղանկարի ու գրաֆիկայի հիմնական ֆոնդերում, ինչպես նաև առանձին՝ ստանալով «Թերլեմեզյանի ֆոնդ» անունը (այսուհետև՝ Թ) և պահվում են «Բ» ֆոնդի թանգարանային առարկաների հետ: Վերջիններիս մեծ մասը փոքր չափերի գեղանկարչական ու գրաֆիկական գործեր են, մեծավ մասամբ՝ էտյուդներ, էսքիզներ, ճեպանկարներ, և կարևորվում են նկարչի «ստեղծագործական խոհանոցին» ծանոթանալու առումով:

Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյակին նվիրված ցուցահանդեսի կազմակերպման, ալբոմ և գիտական կատալոգ կազմելու նպատակով ուսումնասիրվել են նկարչի ամբողջ հավաքածուն և արխիվային նյութերը: Այդ աշխատանքը մեզ համար հաճելի առիթ ու հնարավորություն էր՝ երկար ժամանակ գտնվելով նկարչի արվեստի միջավայրում՝ հետևելով նրա ավելի քան չորս տասնամյակ ընթացող ստեղծագործական ճանապարհին ունեցած զգացումի ու խոհերի բազմազանությանը, նկարչի հետ մտովի ճամփորդել աշխարհով մեկ՝ այցելել Պատմական Հայաստանի նվիրական վայրերը, աշխարհի տարբեր երկրներում (Եգիպտոս, Ֆրանսիա, Իտալիա, ԱՄՆ) փնտրել նախընտրած բնապատկերներն ու սիրելի մոտիվները՝ հզոր լեռներ, անդնդախոր կիրճեր, խաղաղ և ալեբախումներով ծովափեր, որոնք նկարել է բազմիցս, երբեմն ստեղծել նույն նկարի տարբերակներ (օրինակ՝ «Փարիզի աստղադիտարանի մոտի շատրվանը», 1909, Ժ-1860, Ժ-1866, «Սևանա կղզու ափը», 1935, Ժ-2223, Ժ-2228, Ժ-ով նշվում են գեղանկարի ֆոնդի աշխատանքները) կամ նորից ու նորից անդրադառնալով հարազատ դարձած տեսարանին՝ տարվա եղանակի ու օրվա պահի միջոցով արտահայտել հարափոփոխ բնության անկրկնելի տեսարանից ծնված նոր հույզեր ու տրամադրություն:

Շատ կարճ ժամանակում են կազմվել (այդ մասին կարդում ենք Արա Սարգսյանի հուշերում) Թերլեմեզյանի բնակարանում եղած և Նկարչի տանը ցուցադրված գործերի ցանկերը, որոնց հիման վրա նկարչի ստեղծագործությունները մուտքագրվել են թանգարանի մատյաններում: Այդ աշխատանքների մեծ մասն անստորագիր ու անթվագիր է, և հասկանալի պատճառներով ոչ ցուցակներ կազմողները և ոչ էլ թանգարանի փոքրաթիվ աշխատակիցները հնարավորություն և ժամանակ չեն ունեցել ուսումնասիրել յուրաքանչյուր գործ՝ ճշտելու համար դրա անվանումը, ստեղծման թվականը և այլ տվյալներ, որը պահանջում է երկարատև, մանրակրկիտ արվեստաբանական հետազոտական աշխատանք:

Թերլեմեզյանի ֆոնդի ուսումնասիրության ժամանակ վերանայվել են բոլոր աշխատանքների թանգարանային տվյալները (անվանում, ստորագրություն, տեխնիկա, չափ, տարեթիվ, ձեռք բերման եղանակ, հեղինակային մակագրություններ), տեղանունների և դիմանկարչական աշխատանքների կերպարների մասին տեղեկությունները, կազմվել են նաև նկարչի կյանքի ու գործունեության հիմնական տարեթվերի ու ընդարձակ մատենագիտության ցանկերը: Թանգարանային առարկայի փոփոխված անվանումը, ճշտված տարեթիվն ու լրացուցիչ տեղեկություններն արտացոլված են պատկերագրքում զետեղված գիտական կատալոգում[1]:

Տվյալ ստեղծագործության հորինվածքի և պատկերված մոտիվի վերլուծության, մակագրությունների, հեղինակի ստորագրության, ինչպես նաև կենսագրական տվյալների վրա հիմնվելով՝ որոշարկվել են մի շարք նկարների անվանումը և ստեղծման տարեթիվը:

Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Ժյուլիանի ակադեմիայում սովորելու տարիներին՝ ամառային արձակուրդի ժամանակ, Թերլեմեզյանը այցելել է Հայաստան, եղել Էջմիածնում, Լոռիում, ստեղծել է նշանավոր գործերից՝ «Էջմիածնի վանքը» (1903, կտ., յուղ., 70 x 105, Ժ-1778), «Սանահինի վանքի գավիթը» (1904, կտ., յուղ., 99 x 81, Ժ-564, 1913-ի Մյունխենի միջազգային ցուցահանդեսի ոսկե մեդալ), ինչպես նաև բազմաթիվ էտյուդներ: Դրանցից են «Գում. Վաղարշապատ» անվանումով մուտքագրված, իրար շատ նման հորինվածքով երկու գործ (1903, ստվ., կտ., յուղ., 22,5

1 Փանոս Թերլեմեզյան-150. Պատկերագիրք, գիտական կատալոգ, Երևան, 2015, հայ., անգլ., 136 էջ, նկ.:

x 30, Ժ-1779 և 1903, ստվ., կտ., յուղ., 20 x 34, Ժ-1780): 19-20-րդ դարերի հայկական բնակավայրերի մեծ մասին բնորոշ՝ իրար կպած պատերով, օժանդակ շինություններով ու բակով գյուղական տները պատկերված են Սբ. Հռիփսիմե վանքի դիմացի դիտակետից: Առաջին կտավում կանաչ ծառերի ֆոնին նկարված է դարչնահողագույն լուսավոր երանգներով մի քանի տուն, մյուսում՝ տաք շագանակագույնով միայն մեկ տուն է՝ վերցված ավելի խոշոր պլանով: Առաջինի ճշտված անվանումն է «Տներ Սբ. Հռիփսիմե եկեղեցու մոտ», երկրորդինը՝ «Գյուղական տուն Սբ. Հռիփսիմե եկեղեցու մոտ» (նկ. 1):

«Ընդօրինակություն» անվանումով (ստվ., կտ., յուղ., 26 x 34,5, Ժ-2269) աշխատանքի հորինվածքի, գեղանկարչական ու ոճական առանձնահատկությունների ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ այն Լուվրում ցուցադրվող Պաոլո Վերոնեզեի «Խաչի կրում», 1571 թ. նկարից է արված[1]: Ամենայն հավանականությամբ, այս ընդօրինակությունը Թերլեմեզյանը արել է 1903-1904 թվականներին: Մեր ենթադրությունը հիմնվում է այն տեղեկությունների վրա, ըստ որոնց Թերլեմեզյանը Ժյուլիանի ակադեմիայում ուսանելու տարիներին կատարել է նաև այլ ընդօրինակություններ, որոնց անդրադառնում է Ռ. Շիշմանյանը՝ թվարկելով Ռեմբրանդտի «Մատթեոս ավետարանիչ» և Տիցիանի «Անտիոպեն ու Յուպիտերը» աշխատանքները[2]: Նշենք, որ Տիցիանի նկարի ընդօրինակությունը (1903, կտ., յուղ., 80 x 100, Ժ-1768) նույնպես գտնվում է պատկերասրահում: Նկարի ճշգրտված անվանումն է՝ «Պաոլո Վերոնեզեի «Խաչի կրում» նկարի ընդօրինակությունը», 1903 -1904:

Ակադեմիան ավարտելուց հետո Թերլեմեզյանը երեք տարի ապրել ու ստեղծագործել է Թիֆլիսում, դասավանդել Ներսիսյան և Հովնանյան դպրոցներում, այցելել Հայաստան: Այս տարիներին են ստեղծվել Արարատի, Արագածի, Սևանի, Ծաղկաձորի, Գեղարդի տեսարաններով երեք տասնյակից ավելի էտյուդները:

«Ծաղկաձորի վանքը» (1907, ստվ., կտ., յուղ., 20 x 14,5, Ժ-1843) գործը ծաղկաձորյան բնանկարներից մեկն է, որի հորինվածքում Կեչառիսի վանական համալիրի կիսավեր շինությունները պատկերված են ճարտարապետական հստակ ու ճանաչելի մանրամասներով: Մյուսը ստացել է «Վանքի դուռ» (1907, ստվ., կտ.,

1 Замкова М. В., Лувр, ОЛМА Медия Груп, 2003, с. 70-77.

2 Շիշմանյան Ռ., Բնանկարն ու հայ նկարիչները, Երևան, 1958, էջ 274:

յուղ., 20,5 x 15, Ժ-1844) անվանումը, որում պատկերված է Կեչառիսի վանքի Սբ. Գրիգոր եկեղեցու դուռը՝ շեմին նստած կարմիր բլուզով ու սև տաբատով երիտասարդի ֆիգուրով: Այս ճշտումների հիման վրա համապատասխանաբար փոխվել են նկարների անվանումները. առաջինը՝ «Կեչառիսի վանքը», երկրորդը՝ «Կեչառիսի վանքի Սբ. Գրիգոր եկեղեցու դուռը»:

1920 թվականին Իտալիայում ստեղծած էտյուդներից երկուսը գրանցվել են «Բնանկար» անվանումով[1]: Քաղաքային տեսարաններից մեկում երկնքի կապույտ խորքի վրա պատկերված են մայրամուտի ցոլքերով լուսավորված Վերածնունդի դարաշրջանի ճարտարապետության նշանավոր կառույցի՝ Ֆլորենցիայի Մայր տաճարի պարսպի հատվածը, գմբեթն ու աշտարակը: Գործը վերանվանվել է «Սանտա Մարիա դել Ֆիորե տաճարը. Ֆլորենցիա» (1920, ստվ., յուղ., 14 x 22, Ժ-2023, գուն. պտկ. 1): Հաջորդ էտյուդում նույն կոլորիտով արված մայրամուտի տեսարանով Նեապոլի ափամերձ մի հատվածն է, որի հիման վրա փոխվել է նկարի անվանումը՝ «Մայրամուտ ծովի վրա. Նեապոլ» (1920, ստվ., յուղ., 14 x 22, Ժ-2026): «Սբ. Պողոսի տաճարը» անվանումով գրանցված էտյուդի (1920, ստվ., յուղ., 14 x 22, Ժ – 2022)[2] առաջին պլանում նկարված է Հռոմի գեղեցիկ շատրվաններից մեկը, որտեղից 20-րդ դարի սկզբներին երևում էր Սբ. Պետրոսի տաճարը: Քաղաքային բնապատկերի ճշտված անվանումն է՝ «Շատրվան Սբ. Պետրոսի տաճարի դիմաց. Հռոմ»:

Նկարում պատկերված աշխարհագրական ճանաչելի տեղանքի հիման վրա ճշտվել է նաև «Լեռներ» (1929, ստվ., կտ., յուղ., 32 x 50, Ժ – 2173) բնանկարի անվանումը՝ «Խուստուփ լեռը» (գուն. պտկ. 2), որը մեկն է 1929 թվականին Ղափանի շրջակայքից արված աշխատանքներից[3]: Զանգեզուրյան լեռնային բնապատկերի վեհությունն ու գեղեցկությունը նկարում շեշտադրվում է ընդգրկուն համայնապատկերի, առանձին պլանների հերթագայության մանրակրկիտ մշակման, տաք ու լուսավոր գունաշարի միջոցով, ինչը հատկանշական է նկարչի արվեստին:

«Ծառապատ լեռներ» (կտ., յուղ., 16 x 25,5, Ժ-2343) նկարի առաջին պլանում սաղարթախիտ ծառերով լեռների ու դեղնագույն լեռնալանջի խորքի վրա մուգ շագանակագույնով պատկերված երկու

1 Ցուցահանդեսի կատալոգ, 1941, նշվ., աշխ., էջ 27, թիվ 310:

2 Նույն տեղում, էջ 27, թիվ 308:

3 Փանոս Թերլեմեզյան-150, նշվ., աշխ., էջ 85, նկ. 113, 114:

խաչքարը կոմպոզիցիայի իմաստային առանցքն են կազմում, որը նկատի ունենալով փոխվել է անվանումը՝ «Լեռնային բնապատկեր խաչքարով»: «Բնանկար. Քանդած շենքեր» (կտ., յուղ., 22,5 x 31, Ժ – 2302) նկարում իրար մոտ գտնվող կառույցների կիսավեր գմբեթներն ու կամարները կասկած չեն առաջացնում, որ այդ շինությունները վանքի ավերակներ են, և ոչ թե որևէ մեկի կողմից քանդված բնակելի շենքեր: Ուստի անվանումը փոխվել է «Վանքի ավերակներ»:

Բոսֆորի ափերից 1919 թվականին արված քաղաքային բնանկարներից է «Ծովափին» (կտ., յուղ., 26 x 32,5, Ժ–2009) կտավը, որի առաջին պլանում արևի պայծառ լույսի մեջ շողարձակող գեղեցկությամբ խոյանում է Պալյանների կառուցած հանրահայտ Դոլմաբախչե պալատը: Թերլեմեզյանը այդ տեղանքը նկարել է բազմիցս, մեկ շեշտադրելով ընդգրկուն բնապատկերի գեղեցկությունը, մեկ ճարտարապետական շինության ու միջավայրի ներդաշնությունը (Ժ-2012, Ժ-2015): Այդ տեղանքից արված այլ աշխատանքների հետ համեմատելով՝ փոխվել է անվանումը՝ «Դոլմաբախչե պալատը Բոսֆորի ափին», և թվագրվել:

«Ծովափնյա տեսարան կնոջ ֆիգուրով» (կտ., յուղ., 32 x 24, Ժ-2288) և «Ափը. Իշխանաց կղզիներ» (կտ., ստվ., յուղ., 23 x 33, Թ -35) գործերում տեսնում ենք բարետես, շիկահեր, երկար զգեստով երիտասարդ կնոջ պատկեր, որը երբեմն հայտնվում է Թերլեմեզյանի 1921 թվականին Մարմարա ծովի կղզիներում արված ափամերձ այլ բնանկարներում ևս: Դրանցից է «Իշխանաց կղզիներ», 1921 թվականի ստորագրությամբ ու մակագրությամբ (կտ., ստվ., յուղ., 32 x 49, Ժ-2139) նկարը, որտեղ հեռու դիտակետից վերցված բնապատկերում մեկ-երկու խոշոր վրձնահարվածով կառուցված սպիտակազգեստ կնոջ փոքրիկ ֆիգուրը, ասես ձուլվում է դեղնահողագույն ժայռերին[1]: Իսկ վերոհիշյալ երկու էտյուդներում կնոջ ֆիգուրը պատկերված է առաջին պլանում (առաջինում՝ նստած, երկրորդում՝ կանգնած). նկարիչը կարևորել է անհատական դիմագծերի ու քնարական տրամադրության վերարտադրումը: Այս ամենի շնորհիվ տեսարանը ժանրային մեկնաբանություն է ստացել, որը թելադրում է նկարների անվանումը՝ «Կինը ծովափին. Իշխանաց կղզիներ», 1921 թվական (նկ. 2):

«Զրհորի ճանապարհին» (կտ., ստվ., յուղ., 24 x 31, Թ-17) նկարում աջից դեղնահողագույնով պատկերված է գյուղական տան կողապատ,

1 Փանոս Թերլեմեզյան-150, Նշվ., աշխ., էջ 81, նկ. 93:

ձախից՝ քարաշեն ծածկի տակ գտնվող ջրհոր և ինչ-որ արահետ, ոտնահետք կամ այլ մանրամասն: Մարդու ֆիգուր չկա, որ կհուշեր ջրհոր տանող ճանապարհի մասին, ուստի նկարը ստացել է նոր անվանում՝ «Ջրհոր»:

«Նկարներ պարսկական և արաբական ոճի» (11 հատ, թ., տուշ, Թ-210/01439-01449) անվանումով մուտքագրված գծանկարներն արված են կալկայի վրա: Դրանք պարսկական և արաբական հախճասալերի և որմնանկարների զարդանախշերի՝ խնամքով վերարտադրված ընդօրինակություններ են, որի հիման վրա ճշտվել է անվանումը՝ «Պարսկական և արաբական զարդանկարների ընդօրինակություններ»:

«Ղպտական ձեռագործի նկար» (թ., մատիտ, 25 x 9, ներքևում աջից՝ Capt, Թ-236) անվանումով գծանկարում պատկերված զարդանկարները կապ չունեն ձեռագործ կտորների զարդանախշերի հետ. դրանք մանրանկարչության օրինակներ են, որի հիման վրա ճշտվել է գծանկարի անվանումը՝ «Ղպտական ձեռագրի զարդանկարի ընդօրինակություն»:

«Ջրոսավայր» անվանումով մուտքագրված (թ., կավճամատիտ, 38 x 50, Թ-267) գրաֆիկական աշխատանքում պատկերված է Կիսլովոդսկի տեսարժան շինություններից մեկը, որը հայտնի է «Սիրո տաճար» անվանումով: Ճարտարապետական այս բնապատկերը Թերլեմեզյանը նկարել է մի քանի անգամ, որոնցից մեկն է «Սիրո տաճար» գեղանկարը (Ժ-1996): Այս համեմատության հիման վրա ճշտվել է անվանումը՝«Սիրո տաճար. Կիսլովոդսկ» և ստեղծման՝ 1918 թվականը:

«Շեզլոնգի մեջ նստած մերկ կին» (թ., ածուխ, սպիտականերկ, 30 x 23, Թ -293) գծանկարում պատկերված է բարձր թիկնակով ճոճաթոռին կիսահենված-նստած, կրծքի վրա սուր բացվածքով, երկարափեշ զգեստով ու սպիտակ գլխաշորով երիտասարդ կին: Ճշտված անվանումն է «Կինը՝ ճոճաթոռին»:

Մաքուր բնանկարներից բացի, Թերլեմեզյանը սիրել է նկարել նաև ժանրային տեսարաններ՝ կոնկրետ գործողության մեջ գտնվող մարդկանց ֆիգուրներով կենդանություն հաղորդելով բնապատկերին: Որոշարկվել է նաև դրանցից մի քանիսի անվանումը, այդ թվում՝ «Քրդական գյուղ Երևանի շրջակայքում» (1907, ստվ., կտ., յուղ., 24 x 31,5, Ժ–1822) նկարը: Հյութեղ դեղինով, կարմիրով ու կանաչով

հարստացված լեռների ստորոտին մուգ շագանակագույն պատկերված են մի քանի վրաններ, որոնց առջև առաջին պլանում նստած են ազգային տարազ հագած, իլիկ մանող երկու կին և նրանց շուրջը՝ խոտերի վրա, կենդանիներ: Նշենք նաև, որ այս լեռնային բնապատկերում ոչ միայն գյուղական տներ չկան, այլև Երևանի շրջակայքին բնորոշ հարթ տարածություններ են: Նման հորինվածքով մի մեծակտավ աշխատանք («Քրդական վրաններ Թիֆլիսի շրջակայքում», 1916, կտ., յուղ., 55 x 100, Ժ-1958) Թերլեմեզյանը նկարել է 1916-1917 թվականին՝ հերթական անգամ Թիֆլիսում բնակվելու տարիներին: Այդ աշխատանքի հետ համեմատության հիման վրա ճշտվել է նկարի անվանումը՝ «Քրդական վրաններ Երևանի շրջակայքում»:

«Այգի ցանկապատով» նկարի[1] (1916, ստվ., կտ., յուղ., 33,5 x 24,5, ներքևում ձախից՝ P. Terlémézian, 1916, Ժ-2357) առաջին պլանում, փողոցի երկայնքով ձգվող սպիտակ ցանկապատի հետևում պատկերված են սաղարթախիտ ծառեր և երեք նոճի, իսկ ցանկապատի փակ դռան երկու կողմում կարմիր թևկապերով ու հրացաններով երկու զինվորականներ են: Նրանցից մեկը, ասես, երկար ժամանակ նույն դիրքում գտնվելու հոգնածությունը հաղթահարելու համար հենվել է ցանկապատին, մյուսը կիսածնկած հենվել է հրացանին: Ժանրային տեսարանին բնորոշ է նաև զինվորականների կեցվածքի, դեմքերի էմոցիոնալ շեշտադրումը, համազգեստի մանրամասների վերարտադրումը: Նկարի կոմպոզիցիայի ու սյուժեի վերլուծության հիման վրա փոխվել է անվանումը՝ «Պարեկային հերթապահություն»:

«Տուն ցանկապատով և երկու ֆիգուրով» նկարագրական անվանումով (կտ., յուղ., 31 x 23,5, Ժ – 2312) կտավում պատկերված է 20-րդ դարասկզբի քաղաքային տեսարան: Մոխրամանուշակագույն ամպերով երկնքի խորքին մայրամուտի արևով լուսավորված և կանաչ ցանկապատով և ծառերով շրջապատված եռահարկ շենքի դիմաց առաջին պլանում փողոցի հատված է, որտեղ ապակե լապտերով սյանը հենված աստիճանով վեր է բարձրանում լապտերավառը, իսկ աջից կանգնած է նրա գործողությանը հետևող գործընկերը: Տեսարանի ժանրային մեկնաբանության հիման վրա փոխվել է էտյուդի անվանումը՝ «Լապտերավառները փողոցում»:

1912 թվականին Պոլսում բնակվելու ժամանակ Բոսֆորի ու Ոսկեղջյուրի ափերից, Պոլսի թաղամասերից ու շրջակայքից

1 Կիրակոսյան Մ., նշվ., աշխ., էջ 94:

Թերլեմեզյանի տասնյակ նկարները գտնվում են թանգարանում: Դրանցից է «Հանդիսատեսը»[1] (1912, ստվ., յուղ., 24 x 32,5, ներքևում ձախից՝ P. Terlémézian / 912, Ժ-1951) նկարը, որի առաջին և երկրորդ պլաններում կանաչապատ բլրալանջի դարչնահողագույն թմբերի վրա և ծառի տակ նստած և կանգնած կարմիր ֆեսերով տղամարդիկ, սև չադրաներով կանայք, կարմիր զգեստով երիտասարդ կինն ու երեխան պատկերված են զանազան դիրքերով ու շարժումներով՝ դիմահայաց, իրար կողմ շրջված, թիկունքից և կիսադեմով: Իսկ խորքում՝ ծառերով ու թփերով շրջապատված երկհարկ ու եռահարկ տներով քաղաքային պատկեր է: Բազմաֆիգուր հորինվածքը ներկայացնում է ոչ թե որևէ միջոցառում (օրինակ՝ բացօթյա համերգ, ներկայացում) դիտելու նպատակով հավաքված, այլ բնության գրկում հանգստացող մարդկանց խումբ, որի հիման վրա փոխվել է նկարի անվանումը՝ «Հանգիստ բնության գրկում» (գուն. պտկ. 3):

Մի շարք գործերի թանգարանային տվյալները ճշտելուն օգնել են նկարչի ստորագրությունը և շրջերեսի հեղինակային մակագրությունը: Ի դեպ, Թերլեմեզյանը շատ տարբեր ստորագրություններ է ունեցել, երբեմն՝ գրել է միայն անվան ու ազգանվան առաջին տառերը հայերեն, երբեմն անվան առաջին տառն ու ազգանունն ամբողջությամբ, երբեմն՝ անգլերեն, երբեմն՝ ֆրանսերեն:

Ինչպես նշեցինք վերևում, Թերլեմեզյանը Ժյուլիան ակադեմիան ավարտելուց և երկու տարի Թիֆլիսում ապրելուց հետո ճանապարհորդության է մեկնել Եգիպտոս, այնտեղից՝ Ֆրանսիա, և 1908-1910 թվականներին ապրել ու ստեղծագործել է Փարիզում: Այդ տարիներին են ստեղծվել Բրետանի ափերից, Փարիզի տեսարժան վայրերից արված նկարչի լավագույն բնանկարներից մի քանիսը («Փարիզ. Բանվորական թաղամասը գիշերով», Ժ-1869, «Աստղադիտարանի մոտի շատրվանը», Ժ-1860), ինչպես նաև նշանավոր դիմանկարները («Նկարիչ Գրիգոր Շարբաբչյանի դիմանկարը», Ժ – 1861, «Անգլիացի ուսուցչի դիմանկար», Ժ –1864, «Հարդարանք», Ժ – 1870)[2]:

«Նոր կամուրջ. Փարիզ» (1909, կտ., յուղ., 45 x 38, ներքևում ձախից՝ P. Terlemezian, 909, Ժ – 1774) աշխատանքում պատկերված է փարիզյան բնապատկերին հատկանշական գեղատեսիլ անկյուններից

1 Ցուցահանդեսի կատալոգ, 1941, նշվ., աշխ., էջ 23, թիվ 220:

2 Շիշմանյան Ռ. , նշվ., աշխ., էջ 277:

Սենայի վրա ձգվող Նոր կամուրջը, որը ոգեշնչել է նաև Հովհաննես Ալխազյանին («Փարիզի Նոր կամուրջը» (1908, ստվ., կտ., յուղ., 21 x 28)։ Թերլեմեզյանի այս գործը տարբեր աղբյուրներում տարբեր թվագրում ունի (1903, 1907), այն դեպքում, երբ հեղինակի ստորագրության մեջ հստակ ընթերցվում է 1909 թվականը[1]։ Նկարչի ստորագրությունների հիման վրա ճշտվել են նաև «Գաղթականը», 1901 (Ժ-1787), «Վիրավորը», 1907 (Ժ-1955), «Կոլորադո գետի մեծ ձորը», 1926 (Ժ-2076) և այլ աշխատանքների ստեղծման տարեթվերը[2]։

«Հերոսի հուշարձանը» (1919, ստվ., կտ., յուղ., 25 x 30, ներքևում ձախից՝ P. Terlémézian, 19, շրջերեսին՝ հեղ. մակ.՝ «Բոսֆորի ափին», 1919, Ժ- 2010) նկարում պատկերված է Բոսֆորի ափամերձ գերեզմանատան մի հատվածը, որի առաջին պլանում մահարձան է։ Այդ տեղանքից Թերլեմեզյանն արել է այլ նկարներ ևս[3]։ Հուշարձան-մահարձանում բացակայում են որևէ մեկի հիշատակին կանգնեցված լինելը խորհրդանշող մանրամասները, որը պետք է արտահայտվեր ճարտարապետական ձևի ու հարդարանքի մեջ։ Եվ եթե որևէ նշանավոր անձնավորության հիշատակին նվիրված լիներ այդ հուշարձանը, կարծում ենք, երկար տարիներ Պոլսում բնակվող և բազմակողմանի հետաքրքրությունների տեր Թերլեմեզյանը կիմանար այդ մասին և կնշեր հեղինակային մակագրության մեջ։ Նկարի ճշտված անվանումն է «Հուշարձան Բոսֆորի ափին»։

«Դրեդնոուդներ» անվանումով մուտքագրված նկարի (1921, կտ., ստվ., յուղ., 28,5 x 50, ներքևում աջից՝ P. T. Cons, 21, շրջերեսին՝ հեղ. մակագր.՝ «Անգլիական նավեր Պոլսի ջրերում», Ժ – 2050)։ Վերականգնել ենք հեղինակի գրած անվանումը՝ «Անգլիական նավեր Պոլսի ջրերում»։

«Կապույտ լեռը Վանա լճի ափին» (կտ., ստվ., յուղ., 13 x 35, ներքևում աջից՝ Փ. Թ., շրջերեսին՝ հեղ. մակագր.՝ «Կապուտ Կող, 1914, Վանա ծովափը», Ժ-1952) անվանումով և անթվագիր էտյուդի հեղինակային

1 Ցուցահանդեսի կատալոգ, նշվ., աշխ., էջ 15, թիվ 10, Հայկական ՍՍՌ ժողովրդական նկարիչ Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական ցուցահանդեսի կատալոգ, Երևան, 1965, հայ., ռուս., էջ 13, Հայաստանի պետական պատկերասրահ. Կատալոգ, Երևան, 1965, հայ., ռուս., էջ 104, Շիշմանյան Ռ., Բնանկարն ու հայ նկարիչները, Երևան, 1958, էջ 274, Каталог выставки работ Народного художника Армянской ССР Ф. Терлемезяна (1865-1941) / автор-составитель Арутюнян В., Москва, 1949. с.12.

2 Ցուցահանդեսի կատալոգ, նշվ., աշխ., էջ 16, թիվ 32, էջ 23, թիվ 224, էջ 29, թիվ 378,

3 Ցուցահանդեսի կատալոգ, նշվ., աշխ., էջ 26, թիվ 289-303:

մակագրության հիման վրա ճշտվել են թանգարանային տվյալները՝ «Կապուտկող լեռը Վանա լճի ափին», 1914 թվական:

«Գարուն» (կտ., ստվ., յուղ., 30 x 48, ներքևում աջից՝ Ր.Տ, շրջերեսին հեղ. մակագր.՝ «Գալիֆոռնիա / Ծաղկած ծառ», Թ -43) անվանումով և անթվագիր այս և 1926-1927 թվականների մի շարք այլ աշխատանքներում («Դափնեվարդ», Ժ-2143, «Ծաղկած ծառեր. Կալիֆոռնիա», Ժ-2140, «Ուռենիներ», Ժ-2157, «Նռնենիներ», Ժ-2159 և այլն) նկարչի ուշադրությունը գրավել են Կալիֆոռնիայի բնապատկերին հատկանշական փարթամ սաղարթով, հաստաբուն ու գունագեղ ծաղիկներով ու պտուղներով ծառերը[1]: Այս թվականին են ստեղծվել նաև նրա սակավաթիվ նատյուրմորտներից («Նռներ և խաղող», 1926, Ժ-2142, «Նարինջներ», 1927, Ժ-1948) լավագույնները: Նկարի անվանումն է՝ «Ծաղկած ծառ. Կալիֆոռնիա», 1927 թվական:

«Թեոդոսիայի հայ կանայք նկարում են» (տուշ, ծայր, 26 x 35,5, Թ-215) անվանումով և անթվակիր գրաֆիկական աշխատանքի վրա նկարչի հետևյալ բացատրական մակագրությունն է՝ «Քէօթահիո հայ կանայք նկարում են հաղճապակիի վերածվելիք ամանների վրայ. 1912, Քէօթահիա»: Ճշտված անվանումն ու տարեթիվը՝ «Քյոթահիայի հայ կանայք նկարում են սափորների վրա», 1912 թ.:

«Մերկ տղամարդու ֆիգուր» (թ., կարմիր մատիտ, 32 x 22,5, Թ-219) անվանումով գրանցված գծանկարում պտուղը շուրթերին մոտեցրած մերկ տղամարդու ոտքերի տակ հեղինակային հետևյալ մակագրությունն է՝ «Ադամ. խնձորն ուտելէն յետոյ», որի հիման վրա էլ փոխվել է գծանկարի անվանումը՝ «Ադամը խնձորն ուտելուց հետո»:

Թերլեմեզյանի մի քանի տասնյակ անստորագիր էտյուդներ և ճեպանկարներ գրանցվել են «Բնանկար», «Էտյուդ», «Ընդհանուր տեսարան» անվանումներով: Նկարների ուսումնասիրության ընթացքում ճշտվել ու որոշարկվել են դրանց անվանումները՝ հիմնվելով տվյալ ստեղծագործության հորինվածքի, աշխարհագրական միջավայրի ու ճարտարապետական մանրամասների, բնապատկերի մոտիվի վերլուծության վրա, ինչպես նաև համեմատելով այլ աշխատանքների հետ, քանի որ նկարիչը սովորություն ուներ նույն տեղանքը պատկերել տարվա տարբեր եղանակներին ու օրվա տարբեր պահերին:

1 Փանոս Թերլեմեզյան-150, նշվ., աշխ., էջ 84, նկ. 105-109:

Այս շարքի աշխատանքներից են՝ «Տնակ լեռնալանջին» (1905, կտ., ստվ., յուղ., 22,5 x 31, Ժ-1797), «Լեռնային բնանկար կնոջ ֆիգուրով» (1913, ստվ., յուղ., 14 x 22, Ժ- 1941), «Կանաչապատ ափ» (1922, ստվ., յուղ., 14 x 22, ներքևում աջից՝ Փ. Թ., Ժ-2063), «Բնանկար տներով» (կտ., ստվ., յուղ., 14,6 x 18,2, Ժ-8462), «Լեռնային բնանկար» (1918, կտ., ստվ., յուղ., 19,5 x 34,5, ներքևում աջից՝ Փ. Թ., ձախից՝ P. Terlémézian, 1918, Ժ-2001), «Լճափ ձկնորսական նավակներով» (կտ., ստվ., յուղ., 31 x 23, Ժ-1775), «Երևանի մի անկյուն» (1939, կտ., ստվ., յուղ., 44,5 x 66, Ժ – 2257) և այլն:

Ֆոնդի ուսումնասիրության ընթացքում բացահայտվել է, որ «Կղզու տեսարան», «Կղզու ափ», «Ափ», «Ծովափ», «Ամպամած երկինք», «Ամպեր» անվանումներով գրանցված մի շարք էտյուդներում ու ավարտուն բնանկարներում պատկերված են Սևանա լիճն ու կղզին: Եվ դրանք նկարչի ափամերձ ու ջրային այլ բնապատկերներից (Բոսֆոր, Բրետան, Լա Մանշ և այլն) տարբերելու նպատակով այդ աշխատանքների անվանման մեջ ավելացվել է «Սևան» բառը:

Կատարվել են նաև խմբագրական բնույթի այլ շտկումներ. թվարկենք դրանցից մի քանիսը: «Լագերի վայր» (կտ., յուղ., 32 x 49,5, Թ-81) նկարի առաջին պլանում՝ հյութեղ կանաչ բուսականությամբ ծածկված բլրալանջերին իրար կողքի պատկերված սպիտակ վրանները խորհրդային շրջանի պիոներական ճամբարներ են: Նոր անվանումն է «Պիոներական ճամբար»:

«Արարատը եկեղեցու տեսարանով» (կտ., յուղ., 16 x 23, Թ -106) նկարի առաջին պլանում՝ աջից, պատկերված է Հռիփսիմե եկեղեցին: Այս դիտակետից Արարատը պատկերել են հայ նկարիչներից շատերը, այդ թվում՝ Սարյանը: Նկարի անվանումն է «Արարատը և Հռիփսիմե եկեղեցին»:

«Քաղաքային տեսարան գիշերով, Նյու Յորք» (կտ., յուղ., 32 x 48, Թ – 77) անվան փոխարեն՝ «Գիշեր. Նյու Յորք» կամ «Ընդհանուր տեսարան տներով»-ի (կտ., յուղ., 49 x 32, Թ – 82) փոխարեն՝ «Քաղաքային բնապատկեր»: Դարձյալ՝ «Կամարով մուտք, սանդուղք» (կտ., յուղ., 27 x 20, Թ-126) նկարագրական անվանման փոխարեն՝ «Կամարով շքամուտք»: Բնորդների ու բնորդուհիների բազմաթիվ ճեպանկարներ ու էտյուդներ մուտքագրվել են «Մերկ տղամարդու ֆիգուր», «Մերկ կնոջ ֆիգուր» անվանումներով, որոնք նույնպես փոխվել են:

Փանոս Թերլեմեզյանի ստեղծագործությունների այս բացառիկ

հավաքածուի ուսումնասիրության ընթացքում կատարված ճշգրտումներն ու լրացումները գիտական շրջանառության մեջ են դրվել պատկերագրքում զետեղված լինելու շնորհիվ և նոր տվյալներով ամբողջացնում են նկարչի արվեստի մասին հրատարակված մասնագիտական գրականությունը:

Հոդվածում ներկայացված թանգարանային հավաքածուի ուսումնասիրության գիտամեթոդական զանազան մոտեցումները, հետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքներն ու փորձը կարող են օգտակար լինել հատկապես մասնագիտական բուհերի արվեստաբանական բաժնի ուսանողների և երիտասարդ արվեստաբանների համար:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Ժողովրդական նկարիչ, շքանշանակիր Փանոս Թերլեմեզյանի հոբելյանական ցուցահանդեսի կատալոգ / առաջաբանի հեղինակ և կազմող՝ Գ. Լևոնյան, Երևան, 1941, հայ., ռուս., 83 էջ:

2. Շիշմանյան Ռ., Բնանկարն ու հայ նկարիչները, Երևան, 1958, էջ 31, 119, 151, 165-166, 172, 259, 271-288, նկ. VIII, 38:

3. Հայկական ՍՍՌ ժողովրդական նկարիչ Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական ցուցահանդեսի կատալոգ / առաջաբանի հեղինակ՝ Ա. Սարգսյան, կազմող՝ Շ. Խաչատրյան, Երևան, 1965, հայ., ռուս., 50 էջ, նկ.:

4. Հայաստանի պետական պատկերասրահ. Կատալոգ / կազմողներ՝ Դ. Դզնունի, Ե. Խաչատրյան, Տ. Մահմուրյան, Երևան, 1965, հայ., ռուս., էջ 103-109, նկ.:

5. Սարգսյան Ա., Հոդվածներ, ելույթներ, հուշեր, Երևան, 1982, էջ 196-209:

6. Կիրակոսյան Մ., Փանոս Թերլեմեզյանի կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 2014, 118 էջ, 16 գուն. ներդիր:

7. Փանոս Թերլեմեզյան-150. Պատկերագիրք, գիտական կատալոգ / հեղինակային խումբ, Երևան, 2015, հայ., անգլ., 136 էջ, նկ.:

8. Каталог выставки работ Народного художника Армянской ССР Ф. Терлемезяна (1865-1941) / автор-составитель Арутюнян В., Москва, 1949. 16 с.

9. М. В.Замкова, Лувр, ОЛМА Медия Груп, 2003, 126 с.

SUMMARY
Corrections of Certain Information Concerning Panos Terlemezian's Works Collection of National Gallery of Armenia

Knarik Avetisian
PhD in Art History, assistant Professor of State Academy of Fine Arts of Armenia

Panos Terlemezian is one of the masters of Armenian realistic painting (1865, Van-1945, Yerevan). Most of his works (completed paintings and graphic works, etudes, sketches, studies), have found their permanent place in the national art gallery of Armenia according to the painter's will. This rich collection and various archival materials give the opportunity of studying the painter's art thoroughly, completing the system of chronology of his life and activity and to correct certain information about his works.

The materials have found their exact place in the album of the exhibition dedicated to 150thanniversary of Panos Terlemezian organized in the National Art Gallery and are put into scientific circulation.

The problems aroused in the article and the experience of research work will be useful for art history students and for young art historians in general.

Key words: *Panos Terlemezian, National Gallery, collection, correction, landscape, etude, exhibition.*

РЕЗЮМЕ
Атрибуция работ Паноса Терлемезяна из собрания Национальной галереи Армении

Кнарик Аветисян
Кандидат искусствоведения, доцент ГАХА

Согласно завещанию одного из метров армянской реалистической живописи Паноса Терлемезяна (1865, Ван-1945, Ереван), большая часть его работ (живописные и графические работы, этюды, эскизы, наброски) была передана Национальной галерее Армении. Это богатая коллекция, включающая архивные материалы, создает возможность не только детально изучить творчество художника, но и подытожить летопись его жизни и творчества, атрибутировать некоторые музейные данные его работ. Все материалы вошли в научный обиход - опубликованы в альбоме выставки, организованной Национальной галерей Армении к 150- летнему юбилею художника. Рассматриваемые в статье вопросы и подобный опыт проведения научно-исследовательской работы могут стать полезными для студентов искусствоведческого отделения и молодых искусствоведов в целом.

Ключевые слова. *Панос Терлемезян, Национальная галерея, собрание, музейные данные, атрибуция, пейзаж, этюд, выставка.*

1. Գյուղական տուն Սբ. Հռիփսիմե եկեղեցու մոտ
2. Կինը ծովափին. Իշխանաց կղզիներ